ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 92

«26» դեկտեմբերի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԼԵՆ-ԳԷՍ ԹԱՂԱՄԱՍԻ ԽՃՈՒՂԻ 2 ,ՇԵՆՔ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 11 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՉՈՐՍ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների դրույթով և հաշվի առնելով Համլետ Աստուրի Հարությունյանի 2019 թվականի դեկտեմբերի 06-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Վահրամաբերդ բնակավայրի ԼԵՆ-ԳԷՍ թաղամասի խճուղի 2, շենք 1 հասցեում գտնվող բնակելի շենքի 87.29 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, որից բնակելին՝ 83.83 քառակուսի մետր թիվ 11 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N09102019-08-0031) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով, անհատույց, նվիրատվության պայմանագրով տրամադրել այդ բնակելի տանը 2000 թվականից փաստացի բնակվող Համլետ Ասատուրի Հարությունյանի 4 (չորս) անձից բաղկացած ընտանիքին:

2.Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանին

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 595-րդ և 596-րդ հոդվածների համաձայն նվիրատուների հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր, այն ենթարկել

նոտարական վավերացման և ապահովել անշարժ գույքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների պետական գրանցումը՝ վերջիններիս միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	√		
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	√		
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	√		
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	√		
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝			
ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝	√		
ՋԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝	√		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«26» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Մայիսյան